

Long City

Superior Mining Co.

6. 1938

891.99

C-79

ԵՐԱՆՔՆԵՐ

ԻԴԱԽՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏԶՐԱՏ

891-99

Ե-79

ՀՈՂԵՆՑ

19 NOV 2011

891 99
Շ-79

սյ

ԽԻԶԱԽՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՎԵՐՆԱԿԱՆ

1938



1801
38

ՄՈՍԿՎԱ

Յես յերազել եմ քո մասին յերկար,
փնչպես հարազատ մորը իր վորդին
Յեվ կամարներդ են շողացել պայծառ
Իմ անուրջների լույսերում հորդուն:

Յեվ դու ապրել ես սրտում իմ մաքուր,
Վորպես հեռավոր թանգագին կարոտ:
Անուշ հուզմունք ե պատճառել թագուն
Բո անունը ինձ վողջ տարիններով:

Հիմա քեզ մոտ եմ, հալացքիդ առաջ,
Ներքին մի անդուսպ, անսովոր դողով:
Քալում եմ հանդարտ, խոհերով առատ,
Անցնում թաղից թաղ, փողոցից՝ փողոց:

Վողջույն, Մոսկվա, իմ մայր հարազատ,
Աշտարակներին քո մեծ ու չքնաղ:
Միրում եմ ամեն քարդ սրբազան
Իմ կյանքով ջանել ու լուսածիծաղ:

ՅԵՐԳ ԱՏԱԼԻՆԻ ՄԱՍԻՆ

Մեր հողի վրա աճում են ծառեր,
Բերքի դեղեր են խոյացել վերև —
Կյանքի, խնդության աստղեր ե վառեց
Մի գարնանային հուրհրան արև:

Յեկեք, ընկերներ, յերգենք լիաթոք
Մեր առաջնորդին—գարուն ու արև,
Վորին հավասար վոչ մի լուսատու
Տիգերքում գեռ չի փայլել դարեր:

Մեծ Լենինի հետ գրոհի տարալ
Մեր գնդերը նա, հին աշխարհի դեմ
Յեւ իր հանճարի լույսերով անբավ
Մեզ տվեց պայծառ հաղթության հավաստ:

Նա զոդեց իրար ազգեր ու ցեղեր
Յեղբայրական վեհ բարեկամությամբ,
Յեւ մեր աշխարհում փալկեց լուսեղեն
Անմար արևը համերաշխության:

Յեւ իր ձեռքերով նա գրեց արդար
Վոսկի գիրքը մեր—սրբազան ուրենք,
Մեր հայրենիքը առավել հպարտ
Իր յերգը հնչեց հաղթականորեն:

Մեզ փառք տվեցին աշխարհում բոլոր
Փողովուրդները, ազգերը բազում,
Վորոնք հեծում են բռնության տակ խորք,
Յեւ մեր բազմալուր կյանքը յերազում:

Յեկեք, ընկերներ, յերգենք լիաթոք
Մեծ Ստալինին—փրկության արև,
Վորին հավասար վոչ մի լուսատու
Դեռ չի ճաճանչել բազմաթիվ դարեր:

Մեր սահմաններում կանգնել ենք արթուն
Դարձած ուժերն կամք և խիզախություն.
Մեծ առաջնորդը ապրիս ե մեզ հաղթ
Ծով հերոսություն, խնդություն ու բազմ:

Նա մեզ ժպտում ե, վորպես պայծառ հայր,
Նա մեր ուժն ե մեծ, հրճվանքը անհուն,
Վորպես այգեպան, մեր կյանքի անծալք
Պարտեզներն ե նա սերով խնամում:

Յեկեք, ընկերներ, յերգենք լիաթոք
Մեծ Ստալինին—հանճարեղ արև,
Վորին հավասար վոչ մի լուսատու
Դեռ չի ճաճանչել բազմաթիվ դարեր:

ԽԻՉԱԽՈՒՅՈՒՆ

Հայրենիքիս ստինք՝ երից, վորպէս կաթ,
Դու հոսում ես ջրվեժի պէս որն ի բուն,
Յեւ աճում են քո ջերմությամբ լիառատ
Մեր դաշտերում քանի՜ հասկեր ու ցողուն...

Յերանգներով, ո՛, բաղմալան ու շքեղ
Մեր ցիւրերում դու անձրևի՜ր բարեբեր,
Յեւ քո կապած ծիածանով գունագեղ,
Թող ծիծաղեն մեր արտերը վոսկերերը:

Արկտիկայի սառույցներից մինչև լուրթ
Յերկնային անհունները անանուն
Մենք անցնում ենք վորոնումով անհաղուրդ,
Նոր ուղիներ և նոր ափեր բաց անում:

Մեր մաքառման, տքնութիւն մեջ այդ յերան
Քո վոգին ե առաջնորդում մեզ ուղիղ,
Յեւ մեր սրտում ամեն ցնորք ու յերազ
Գործ են դառնում և քրանաջան վեհ ուղի:

Արդ՝ հորդի՜ր դու վոսկյա գանձդ՝ հեռածայր
Հայրենիքիս լայն դաշտերում մրգառատ.
Խիզախութիւն, դու նոր մարդու հզոր մայր,
Խորհրդանիշ դու մեր կյանքի և արլան:

Տուր հիմա քո կաթը վսեմ, սրբազան,
Իմ գրչին այս զեռ գողգոջ ու ալնքան նոր,
Վոր քո գովքը հլուսեմ այսոր անվարան,
Յեւ յերջանիկ լինեմ ընդմիջտ քեզանով:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ

...Հողտեղ են քեզ շարունակ անհաղուրդ
Սրբաները և տերերդ անվաստակ.
Յեւ հանել են նրանք արնոտ, սե աճուրդ
Վերջին, վերջին քո ցնցոտին, Հայաստան:

Բայց աճել ե քո սրտի մեջ անողոք
Վրեժի բորբ ցասումն արգար ու հաստատ,
Յեւ արթնացած խավար քնից անամոք՝
Բարձրացել, ըմբոստացել, Հայաստան...

Յեւ լինի զորշի տակ սրբազան
Սաքառել ես—քո ուժերին միշտ վստահ,
Մինչև անպարտ վեհ շքերթով դու հասար
Այս որերին, Խորհրդային Հայաստան:

Քո կենսախինդ յերակներով բաղմալար
Մեր գարունը հոսեց վարաբ ու կայտառ,
Յեւ լինյալն արևի տակ մեր անմար
Հասակ առար, Խորհրդային Հայաստան:

Աչքերդ խոր, ելեկտրաշող արեգակ,
Դարձել ես դու այժմ հսկա մի տիտան,
Յեւ հասակով, ինչպէս լիւր անխորտակ,
Կանգնել ես դու, Խորհրդային Հայաստան:

Քո դաշտերում ու լեռներում բարձրաբերձ
Դարբնում ե մեր լուսեղեն ապագան,
Յեւ զարկում ենք ուրախության շեշտ ծափեր
Քո այս տունին, Խորհրդային Հայաստան:

Մեր հայրենիք, կամարակնայ, փառավար,
Քո յերկնքի կապույտի տակ անսահման,
Աճել ե, ո, ինչքան, ինչքան հերոս նոր—
Նոր մարդու տիպ, Խորհրդային Հայաստան:

Մեր սրտում ել տոն ե պայծառ, Նոյեմբեր,—
Առավոտ ե, գարնանային, մայիսյան.
Մենք սիրում ենք քեզ, հայրենի, բազմաբերդ —
Յերիտասարդ Խորհրդային Հայաստան:

Մենք սիրում ենք քո շենքերը նորակերտ,
Քո դաշտերի, քաղաքների առօրյան,
Ուր թնդում ե հերոսական մի նոր յերթ,
Ո՛ր, մեր խարտյաչ Խորհրդային Հայաստան:

Մեր նոր աշխարհ, հերոսության պատվանդան,
Մեծ կառուցման, լեզենդական, ո, տիտան՝
Հոկտեմբերյան Խորհրդային Հայաստան,
Նոյեմբերյան Խորհրդային Հայաստան...

ՀԱՅՐԵՆԻՔ

I

Նվաճել ենք մենք նրան՝ խիզախությամբ տքնաջան,
Կրել հոգսեր ու զրկանք, դժվարության հսկա բեռ,
Ճանապարհին մեր քարոտ՝ վոմանք ընկել են հաճախ,
Վոմանք դավել խայտառակ, վոմանք անկում կարգացել...

Բայց անսահման հավատով մենք սիրել ենք բոլր ու թեթ
Տքնությունը մեր ճարտար՝ անհղրական լուրթ ովկիան,
Յեւ արյունն ե մեր հոսել, ապա քրտինքը ջրվեժ,
Մինչև ափերն այս լուսեղ՝ յերջանկությամբ տիրակալն:

Մերն ե հիմա արեւը, մերն ե աշխարհն այս չքնաղ,
Ուր տեսել ենք մենք դարեր լոկ ճորտություն անվախճառ,
Մերն են հողերը բոլոր ե լեռները վեհ կանգնած,
Անգամ անհունը կապույտ՝ իր աստղերից անբաժան:

Յեւ վառել ենք քերթության մեր լույսերը սրբազան
Հայրենիքում այս շքեղ—նվիրական, ինչպես մայր,
Ուր հորդում ե որն ի բուն ստեղծագործ ու ազատ
Ժողովրդի հանճարը՝ զետերի պես անհամար:

II

Իսկ դուք, հիմա գեռ խավար, գիշերներով մութ ու բիրտ,
Մեր դեմ դավ էք պատրաստում— ժաշակրաց արշավանք,—
Դուք, վոր ստոր յերազով, զազանացած ե անսիրտ
Փորձում եք միշտ քարկոծել մեր յերկիրը անկաշկանդ:

Դուք, վոր այրում եք հիմա խարույկների վրա ձեր,
Ինչ վոր թանգ ե յեղիլ հար, մարդկային ու հանճարեղ,—
Սպանդներ եք նշուլթում նոր և աղետներ դավաբեր,
Տենչում խավար յերազով մեր դեմ գալու յեղք ճարեղ:

Ձեք պատճառի սակայն դուք մեր շարքերին վոչ մի ահ,
Յանկուլթյան դեմ ձեր արնոտ՝ մենք զլնստ ենք և արթուն,—
Յերբ հարկ լինի՝ միաձույլ մենք կողջունենք մարտ ու մահ
Հայրենիքի համար սեր՝ սուրբ լույսերով զվարթուն:

Նրա ամեն քարը թանգ՝ մեր արյունով վոռողված՝
Մենք սիրում ենք խիզախող մեր կյանքի պես առնական,—
Մենք, վոր գիտենք աշխարհի բախտի համար միշտ հողալ
Յեկ կռուցել վոսկեղոծ, մի յերջանիկ ապագա...

ՍՈՆԵՏ

Անուրջներին վրանի տակ նրբագեղ
Դու նստել ես դյուլթական ու հեղանաղ.
Գիտե՞ս վորքան խորն եմ սիրում հիմա քեզ,—
Չնաշխարհիկ եմ սիրուհի, ի՞մ յերազ...

Վորպես լույսի ճերմակակաթ շատրվան՝
Քո վարսերից իմ հույզերն են հոսում հար,—
Դու իմ սրտի վերջին-վերջին հանգրվան,
Յելեվեջող նոր լերգերի իմ քնար...

Թող իմ կլանքի ծառի վրա դեռ կանաչ
Ծաղիկներդ հավետ մնան անթառամ,
Նրանց բուլբուլ մեղրանման և անանց
Թող յես ծծեմ ալս որերում լիառատ:
Ո՛ր, քո սիրով սրբազան ու անդրանիկ,
Յես հպարտ եմ, խորհրդային հայրենիք...

Յեւ թնջու թյուններ յերգել սեթևեթ,
Իր ցնորքներով միշտ անիրական:

Դու ինձ լւծ տվիր, անսպառ ավյուն,
Իմ հարազատ մայր, իմ հզոր բանակ,
Թեկուզ յես դառնամ ծերուկ գողգոջուն,
Դարձյալ կ'իշեմ պատկերդ անանց:

ՅԵՐԱՒՏԱՂԻՏՈՒԹՅՈՒՆ

Կարմիր բանակից

Յես յերազել եմ քո լույս առորյան,
Վոր ինձ թովել ե տարիներ յերկար՝
Խնչպես հեռավոր մէ չքնաղ որրան—
Լի զարնանային լերդերով պայծառ:

Յեւ յես հաշվել եմ ամիսներ անցնող,
Թե յերբ կարոտով քո գիրկը կգամ,—
Ո՛ր, պատանեկան ուրեր իմ շողշող,
Իմ ջահելության յերազներ վստկա...

Դո մեջ եմ այսոր, իմ վսեմ որրան,
Կատարվել ե իմ փափազը անհուն,
Յեւ ինձ թովում ե քո նոր առորյան.
Իբ ստեղծարար ջերմությամբ անուշ:

Թվում ե անցավ մի վողջ վոսկեղար
Դո զրկում լեռուն, իմ անպարտ բանակ,
Յեւ յես, փոխվել եմ ու դարձել այլ մարդ՝
Դո զբողի տակ՝ պայծառ ու անահ:

Յես սովորեցի գիշերներ անքուն
Յերկրի վերելքը հսկել անդադար,
Յեւ սրտիս խորքում հնչեցին անուշ
Նվազներ՝ լուսե հույզերով վարար:

Յես այն չեմ հիմա, պատանին այն խենթ,
Վոր խաղալ գիտեր, կատակել միայն

ԱՌԱՋԻՆ ԳՆԴԻ ՄԱՐՏԻԿՆԵՐԻՆ

Գիտեմ, կռունկի յերամների պես
Կթռչեն որեր, տարիներ անդամ,
Յեվ ձեր առորջան միշտ կհիշեմ յես
Կարոտով անհւշ՝ կենսախինդ մանկանս

Ինչպես յերազում, կցուլա նորից
Հուշերիս հովտում արեն այս անամի,
Յեվ այս հանդերի նրբագեղ մորին՝
Խոտերի միջից գլխիկը հանած:

Յեվ ձեր շարքերը կհիշեմ անվերջ,
Վորոնք աժուր են, ինչպես ապառաժ,
Վորոնք տվին ինձ պարզե ու նվեր՝
Կորովի, հույզի, առուններ վարար...

Ձեզ նման կանցնեմ ճանապարհներն իմ՝
Նստած տաղերիս նժույզին վոսկյա.
Մեր հայրենիքին միշտ հավատարիմ՝
Ուժի, մաքառման մարտիկներ հսկա...

ՄԵՐ ԳՆԴԻ ՅԵՐԳԸ

Թեկուզ լինի ցուրտ ու ձմեռ,
Կամ հուլիսյան շոգ ու տոթ,
Մենք պատրաստ ենք զենքերով մեք
Գրոհ գնալ անհողողդ:

Յեվ յերբ ձգվի ուղին գծվաք,
Լեռնալանջով, ձորով խոր,
Ձենք ընկճվի, կանգնի շղվաք,
Մեր շարքերով կռու, հզոր:

Աշխատանքով վեհ, սրբազան
Մեր յերկիրն ե աճում հար,
Ուր արե կա բաղձահաղար,
Յերջանկության բոցով վառ,

Ուր վերելք կա, կյանք բարդավաճ
Յեվ դաշտերի վոսկյա բերք,
Ուր ամեն մի գյուղ ու ավան
Գանձեր ունի անեղերք:

Առանջ գնանք, առանջ — առանջ, —
Հաղթանակից հաղթանակ:
Ստալինը մեզ զորավար
Յեվ ուղեցույց անսայթաք:

ԳԻՇԵՐԱՅԻՆ ՅԵՐԹ

Լուանային յերթին՝ վեհ ու համընթաց
Մեր գունդն էր քայլում լեռներում հեռու
Մենք մտնում էյինք ձորեր ու անտառ՝
Յրելով ձյունի հյուսեր ու սառույց:

Ո՛հ, գեղեցիկ էր գիշերն այդ ձմռան—
Յեւ ձյունակատար սարերը շքեղ,
Վորոնց գեմքերին աչքան անմայլ
Ցնորքներ կային, կարոտներ անկեղծ:

Վողջոյն քեզ, գիշեր, լուսին ու ձմեռ՝
Լեռնազագաթներ աղամանդաթագ—
Մենք յերգում էյինք, քայլում այդ գիշեր՝
Հեռու ձորերում, հանդերում արձակ...

ԻՍ ՀԱՅԱՑՔՈՒՄ

Իմ հայացքում աղեղնաձև ծիածան՝
Կգա շուտով մեր Մայիսը զորանոց
Յեւ կժպտա նա լիասիրտ, հիացած
Մեր անսպառ տոկունությամբ, մեզանով:

Նա կաեսնի, թե ինչպես ենք անդադար,
Առատաձյուն յերկնքի տակ ցուրտ ձմռան
Նվաճել խոր համառությամբ մեր ճարտար,
Ռազմի ուսման զազաթիւրը անսահման:

Յեւ մենք կազմած զորահանդես վիթխարի,
Կքայլենք կուռ մեր մայիսին՝ լնբառաջ՝
Պարզած բարձր մեծ զրոշներ պալքարի:

Կհնչեն մեր շրթունքներից հեռական
Վառ խոսքերի զողանջները սրբազան՝
Յերգումներ վեհ և՛ խորիմաստ, և՛ խիզախ...

ԳԱԳԱՅՆԵՐ

I

Ղայն լեռնադաշտն ե փովել մեր դեմ,
Վորպես վիթխարի սինի կլոր,
Յեվ լուսարացի բոցի վսեմ
Վողողում ե մեր շուրջ բոլոր:

Գորշ մշուշների անվերջ շղթան
Լուծվում ե հստակ դաշտի վրա,
Յեվ սփովում ե անչափ վարար
Գարնան բույրը խոր ու անսահման:

Առաջ են շարժվում կուռ ու վստահ
Մեր դասակները, վաշտերը բյուր,
Սենք Հոկտեմբերյան դրոշի տակ՝
Մեր հւժն ենք փորձում, կորովը հուր:

Յեվ դառնում ե մեր քրտինքն առու,
Վողողում առաջ դեմքերը մեր,
Սակայն կորովն ե հոսում առույգ
Մեր յուրաքանչյուր ներվով անվերջ:

II

Յերբ գծեց յերկնին կիսաշրջան
Հեռային արեւ շքեղ վառ,
Մենք վերջիվերջո վեր բարձրացանք,
Առանք բարձունքն այն բարձրակատար:

Մեր հայրենիքում մետաղակերտ
Հիմա գործում են ինչքան զորքեր,
Վորոնց նվաճած ամեն գաղաթ
Մեզ համար կյանք ե ու ապագա:

Մեզ պես առնում են գաղաթներ նոր
Մեր հայրենիքի զինվորներն այդ
Յեվ մեր սվինին վստահ այսոր՝
Գործում են նրանք, գործում հաստատ:

Մեզ թե ե տալիս, պայծառ ուղի,
Մեծ դեկավարի կամքը վսեմ,
Յեվ մեր ընթացքով անշեղ, ուղիղ,
Առնում ենք անթիվ գաղաթներ լուսե:

ԻՍ ԿՐԱԿԸ

Ճերմակափայլ ձյունի մեջ այս առավոտ պառկեցի,
 Վոր առաջին մարտական քննությունս հաջող տամ.
 Նշանակեալն իմ դեմի նշմարվում եր, գեղեցիկ,
 Իսկ աջ կողմս չոքել եր ջոկհրամբ հաղթական:
 Նա հսկում եր իմ բոլոր շարժումներին, համարձակ,—
 Ինչպես փորձված ու ճարտար լերիտասարդ սնայակեր,
 Չլինի՞ հանկարծ սխալվիմ կրակելու ժամանակ,
 Ու գնդակս վրիպի, ամոթ զգամ ջոկում մեր...
 Անց ե կենում ակնթարթին ու պայթյունով հրածին
 Հարվածում ե գնդակն իմ խնձորակի կենարոնին.
 Հետո վորպես թանգ նվեր յես ստացա իմ ջոկից
 Մի գրոշակ մետաքսե, վայել կարմիր մարտիկին:
 Հիմա դրոշն այդ կարմիր, շքանշան ինչպես բորբ,
 Ծածանվում ե սվինիս պողպատափայլ սուր ծալրին,
 Նրա գունը գրավիչ վոնց ճառագայթ բարկ, բոսոր,
 Ներշնչում ե իմ հոգուն և՛ խինդ, և՛ ուժ, և՛ պատիվ:
 Ա՛յժմ վարժված իմ ընկեր հրացանի ազմուկին՝
 Չեմ վրիպում, ո՛, լերբեք, վոչ մի գնդակ ու նախ.
 Ամեն անգամ, այսոր յես, այս ձմեռվան ցրտերին,
 Յերբ պառկում եմ ձյունի մեջ, վոր կրակեմ շիշտակի,
 Խիզախ խոհեր են կիտվում իմ առնական ճակատին.
 Այս փամփուշտը, վոր հիմա թիրախին եմ կրակում,
 Վաղը, յերբ վոր թշնամին փորձի մեր դեմ կրակել,
 Կկրակեմ յես ուղիղ նրա գնչին արնախում:

ՄԵՆՔ ՊԱՏՐԱՍՆ ԵՆՔ

.. Ինչքան փորձեք մեր աշխարհին մահ բերել,
 Նույնքան ուժգին մենք կլինենք անսասան,
 Մենք, վոր դարեր անվերջ գիշեր ու ցերեկ
 Յերազել ենք այս որերը սբբազան:

Մենք սիրում ենք հալրենիքը մեր չքնաղ,
 Ինչպես վոչ վոք այս աշխարհում չի սիրել—
 Մենք, վոր պայծառ այս սահմանում լուրջ կանգնած
 Պատրաստ ենք մեզ նրան զոհել, նվիրել:

Խարույկների վրա ձեր այդ բարբարոս
 Դուք այրում եք հազար գրքեր հանճարեղ,
 Այն ժամանակ, յերբ դարձել ենք մենք արև...

Մենք մեր վաստակն անվերադարձ նվաճած՝
 Բնավ փուլթ չե գաղանական քենը ձեր,—
 Դուք—պատմության մութ սատրապներ ու գաճաճ,
 Դուք խավար եք, իսկ մենք՝ պայծառ լուսածեղ:

Մեր տքնությամբ ու պայքարով քրտնաթոր
 Նվաճում ենք վաղուց յերազ ապագան,
 Յեվ մեր ուղին, վոր անցնում ենք յեռանդով
 Չի ավերի ձեր մոռութը ապական...

ՊՈՍՏԻ ՎԼՐԱ

Շուրջս գիշեր ե, անտառ ու ծաղիկ,
Աստղերն են վերից նայում լուռ,
Իսկ հեռվում քաղաքը մետաղի
Թևերն է փռել յերկաթակուռ:
Արծաթ շղթա յեն կապել աստղերը,
Ինչպես սուփակներ լուսացու,
Յեվ խաղաղ ծովում իր բյուր լաստերը
Առանորդում է Մեծ Արջը ծուլ:
Ա՛խ, վերքան անուշ ու գեղեցիկ է
Գիշերն այս մարմանդ ու անտառը,—
Ծառերն այս կանաչ այնքան վե՛ր ձիգ են
Ու սփվում են հանց ծիծառը:
Մեծ Արջի արծաթ, լույս լաստերի պես
Հուշերս են հոսում հորդառատ:
Յես ինձ ասում եմ,—բանակային ես,
Հուզվելն իզուր է, թախծելը վատ:
Այս անտառի պես դու գեռ կանաչ ես,
Ճյուղերդ նրա նման հյութեղ,—
Թո՛ղ այդ հուշերը և այն կակաչը,
Վոր փորձեց արյունով սիրտդ դյուլթել:
Այժմ մարտիկ ես հարմիր բանակի՝
Այս պոստի վրա լուրջ ու արթուն,—
Յեղի՛ր դու տոկուն և հաղթանակի
Դրոշը կրի՛ր այն մեծ մարդու:
Յեվ յես վճռում եմ՝ ժամին գիշերվա՝
Առ ետմ լինել վաղվա ուղիս
Յեվ իմ աշխարհի թեկուզ մի մազին
Տալ արյունն իմ՝ ջերմությամբ վառ:

Յեվ մարտնչիլ թշնամու դեմ անգութ,
Ինչպես հերոսն այն լերիապարդ,
Վոր հեղափոխության համար մանկուց
Տվեց լն՝ ունե՛ր—կյանքը ավարդ:

*
*
*

Դեմքս զգվում է փաղաքուշ ձեռքով
Արշալուռն այս, ո՛ր, փառահեղ,
Յեվ ծավալվում են լույսերը յերգող
Նաև քնարիս վրա ջահել:

ՈՂԱՉՈՒԻ ՅԵՐԳԸ

Յես յերազել եմ անըջով կապույտ
Յերկնի անհունը ջինջ ու լազուր
Յեվ իմ մանկության լճերի ափում
Դեզերել եմ հար կարօտով սուր:

Յես յերազել եմ թևեր ունենալ,
Ինչպես լեռնային խիզախ արծիվ,
Վորն իր թևերի թափով անահ
Ճեղքում ե ողբ փոթորկածին:

Իմ կարոտն ալդ խոր ու մանկական
Յնորք ե յեղել միշտ ինձ համար,
Յեվ ցնորքներիս աշխարհում, սակայն,
Յես տենչացել եմ թռչել համառ:

Յերկնային անձիր լուրթ հեռաստանում
Դարձել եմ այժմ խիզախ ճամբորդ,
Վորպես նոր կոլումբ, հերոսանուն՝
Վերսնում եմ նոր յեզերքներ բորբ:

Իմ յերակներով հոսում ե արազ
Նոր հերոսության ուժ ու ավյուն,
Յեվ իմ սերնդի յերազներն առատ
Խինդ են պարզեում ինձ որ-ավուր:

ՀՐԱԺԵՇՏ ՃԱՄԲԱՐԻՆ

Անտառների վրա արդեն
Աշունն ե լոռ փռվում արագ
Յեվ խորախոր ձորերում թռն,
Դարանում ե մուժը բարակ:

Մենք թողնում ենք ձորերը այդ
Յեվ լեռները սրագագաթ.
Հայն ուղին ե բռնում վստահ
Մեր վողջ գունդը կամ բով հաստատ:

Պիտի անցնենք ուղի չերկար,
Թե գիշերներ, ե թե ցերեկ.
Հետև պիտի թողնենք հերկած
Անձիր դաշտեր, լեռ ու վրելք:

Արդ, թողնում ենք հովտում բաղձած
Սեր ճամբարը զեղեցկաշուք,
Ուր ուժով ենք լցվել համակ
Ամառն ամբողջ՝ մինչև աշուն:

Մենք ասել ենք՝ լինել ճարտար
Կուռ մարտիկներ յերիտասարդ,
Վոր լեռնի գործին հպարտ
Տանք մեր կյանքը, արյունն արդար:

Մենք բարով, լեռներ ահեղ,
Յեվ անտառներ կանաչագոգ,
Ձեր գովաշունչ գրկից ջահել
Մենք գնում ենք հաղթանակով:

ԶԱՄԵՌՆԱՅԻՆ

Զմուռն յերկիրն քր մաղում ե առատ,
Այլուն իր լեցնում զաշտերի ափսեհն,
Յով հորիզոնից քայլում ե հանդարտ
Հանդերի վրա իրիկունը սեպ:

Ինչքան միգրոտ ե, ո՛ր, ինչքան անդորր
Այս պահը խորունկ՝ անսահման անուրջ,
Վորի յերազուն վրանի տակ խոր
Տարածվել ե նիւշ-որոր ընդհանուր:

Յես գիտեմ, հիմա ընդերքում հողի
Վորքան հանդեր են սպասում պարնան,
Վորոնք ցողված մեր քրտինքով աղի՝
Աշնանը պիտի լիութուն դառնան:

Յերկիր, կրացվի մայիսդ պայծառ,
Վոր լուկ ցնորք ե թվում պահին ալս,
Յեվ ամեն այգի, ամեն արտ ու ծառ
Կծածկի բերքի պսակ ու հինա:

Յերպանիդ խոր, ծիածնագույն
Բարիք կդառնան, մրգի մակընթաց,
Վողջույն քեզ, հունվար, սարսուռ/դ մաքուր,
Յեվ ձեզ, ո՛ր, ճերմակ լեռներ ու անտառ...

1935

*
* *

Սահում ե Քուռն ալստեղ դանդաղ,
Մտամոլոր ու լուսնայն,
Վերից՝ յերկնի լեզակն անծայր
Ու արևի հուրը հանդարտ:

Կազրեկն ահա ձյունագաղաթ,
Ու լեռների յերկար քարվան,
Նրա վրա՝ ինչպես վրան՝
Բազմած ամպեր ճերմակակաթ:

Ալստեղ նազուն դանդուրներ կան,
Բամբակային փթթուն գարուն,
Գրոհողներ կան հաղթական,
Քրտինք ե ջանք առժև, առժև...

1932 թ.

ԶՆՄԱԼՆ ԱՐԴԵՆ ԸՆԿԱՎ...

Ձահալն արդեն ընկալ. ցնդեց մառախուղը,
Եւ չէն, չէն լինի կապանքները ձմռան,
Ու եւ չի ձերմակի Լալվարի գլուխը,
Կիւսլան նորից վոսկիները ամռան...

Տես, շշնջում ե նոր առավոտյան հովը,
Հեռվից ընթանում են տրակտորի վաշտեր,
Մեր կյանքը յիման մի մաքառումի ծով ե,
Դեպի ձեզ ենք գալիս, գարնանային դաշտեր...

1933

ՄԱՅԻՍ

Յերբ իմ դռան առաջ մեռնի անշշուկ
Արծաթահեր ծերունին այս ցուրտ ձմռան,
Դու կլանք կառնես քո հասակով վոսկեշուք,
Դեմքիդ վրա՝ հազար ժպիտ ու յերանգ:

Դու կմտնես տունս վորպես անուշ հարս,
Կրծքիդ շարած աղամանդներ ու մարջան,
Յես կսանրեմ քո հյուսերը հրավարս,
Յեվ ականջիդ կշշնջամ. «Իմ չար ջան...»:

Կհամբուրեմ մատներդ շող ու ծաղկե,
Գարնանային չքնաղ աղջիկ, իմ չերազ,
Յեվ քնարս զվարթութեամբ կերգի քեզ,
Յեվ նայվածքներդ անուշ ու հեղանաղ:

Տես, մնում եմ քո գալստյանն յես անհագ,
Յեվ իմ սիրտը չունի վոչ մի դռնակ դոց,
Դու իմ վերջին-վերջին սիրո անափ այգ,
Իմ յերգերի վառ լուսարան ալեկոծ...

1935

ՈՒՂԻ

Թեկուղ վառում ե գեմքս աշտը
Քրտինքի տապը, ինչպես կրակ,
Բայց յես միշտ տնդուլ, նոր յերազով
Վերելք եմ յեկում անշափ արագ:

Հոգնում եմ հաճախ, տանում հոգսեր,
Սակայն քալում եմ՝ աչքս հեռվին.
Այդպես մարտիկն ե խինդով վսեմ
Հաղթաքայլ գնում անեղ կովի...

ՋԱՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Յես բացել եմ քո առաջ կյանքիս դուռը մարմարե,
Իմ մայիսյան ծիածան, յերազանուշ սիրո՞ ծառ,
Մալը տունս դուռնագեղ, աչիկներով քո արեվ,
Ուր ցոլում են իմ բախտի յերանգները հեռածայր:

Շշնջում ես ականջիս սիրունու պես իմ չքնաղ
Հեքիաթները քո վոսկյա և անուրջները դոհար,
Ապա ցողում ես դեմքիս լույսդ կոհակ առ կոհակ,
Ինքդ դառնում ջինջ յերազ, ցոլքի պես լուսաշաղ:

Դու վարդենի լես դառնում, կամ լեռնային մանուշակ,
Ինչպես վայրի, դուռթական ծաղիկների տիրակալ,
Իսկ յես՝ մանկան նման հար՝ թերթիկներդ լուսակաթ
Ազահաբար սեղմում եմ շրթունքներին իմ շուշան:

Տեղս ալդպես լիաձեռ քո անձրեղ մայիսյան,
Այգեստանում հույզերիս, իմ յերգերի վրա այս.
Ջահելության, ո՞, յերկինք, յերջանկության հանգրվան,
Չնաշխարհիկ որերի վոսկեշրջան իմ յերազ...

Յերակներիս թեւերով թող արյունդ ընթանա,
Յեզ աչքերիս բիրբրում դրոշներդ ծածանվեն,
Թող ծծեմ յես անսպառ մեղրագինին քո անվերջ՝
Խլգախության կաթը քո — Ջահելության իմ անահ...

Անվերադարձ դու անցար,
Ինչպես յերազ մի շքեղ,
Բայց յերգերդ վոսկերառ,
Յերազանուշ ու հնչեղ
Մնացին միշտ մեղ համար
Վորպես գոհար ու մարմար,
Հմայքներով անհամար...

1932

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՔՈՒՄԱՆՅԱՆԻՆ

Անվերադարձ դու անցար,
Ինչպես յերազ մի շքեղ,
Բայց յերգերդ վոսկերառ,
Յերազանուշ ու հնչեղ
Մնացին միշտ մեղ համար
Վորպես գոհար ու մարմար,
Հմայքներով անհամար:

Ո՛հ, դեռ կապրեն միշտ անմահ
Ինչքան բեղուն վոսկեգար,
Նոր կյանքը մեր պայծառ
Հավերժորեն ու յերկար
Գստի հողմավար
Արվեստ ու զանձ անհամար,
Քո զանձերի պես անծալը,
Յով նրանցից բարձրավառ:

Դու մերն ես, ո՛հ, վարպետ,
Քո քնարով վոսկերառ,
Ինչպես մերն են առհավետ
Անցյալի այն անհամար
Գազաթները մեծարվեստ,
Վոր յեղեկ են վեհ, ճարտար,
Ուժգնությամբ բարձրավառ,
Յեւ իմաստուն, և՛ անճառ...

ԵԼԵԳԻԱԿԱՆ

Դաշտային յերթից յերբ վերադարձա,
Արագ մոտեցավ ինձ ընկեր Ավոն.
Նա ինձ վողջունեց ժպիտով արծաթ,
Յեւ ձեռքս տվեց հենց այդ առավոտ
Տնից ստացված հեռագիրը նոր:

Բացեցի իսկույն թուղթը քառածալ՝
Սրտումըս արագ աճող մի կասկած,
Կարդացի նամակն յես ազահարար,
Թախիծը փռվեց հոգուս մեջ հանկարծ,
Ինչպես հյուսիսի մառախուղը մառ:

Ծանր հիվանդ եր իմ հալըր բանվոր,
Վորն ապրում եր վայրում հեռավոր.
Նա իր կարոտով անդուսպ, չափազանց՝
Ինձ եր ցանկանում մինչև առավոտ:

Յերբ մեր սենյակի շեմքից ներս մտա,
Դեմս զրված եր դագաղն իմ հոր,
Վորի զալկահար գիակի վրա
Իմ մայրն եր վողբում՝ մռայլ, սգավոր:

Աչքերիս նստեց գորշագույն մշուշ,
Անցյալ ու գալիք խառնվեցին իրար,
Թվաց թե շուրջս գիշեր ե անհուն՝
Ձմռան յերկնքի խոտուժյամբ անծայր,
Իսկ սենյակը մեր—ինչպես ցուրտ անձամբ:

Յեւ յես իդագար, դեմքս արցունքոտ՝
Ընկա սիրելի գիակի վրա:
Վիշտն եր թանձրացել մռայլ ու անքող,
Սրտիս մեջ զարկիլ սառնաշունչ վրան՝
Իր կապարաթե ծանրությամբ դաժան:

Դու ան 'երադարձ, առհավիտ անցար,
Իմ աշխատասիր. արիասիրտ հալըր,
Ել յերբեք, յերբեք չեմ մոռանա քեզ
Իմ որերում վեհ ու զարնանագեղ:

Քեզ հետ ապրել եմ մանկությունս գորշ
Այն մղձավանջոտ որերում անդամ,
Յերբ վորպես բանվոր դու միշտ պլխակոր
Աշխատում էիր մինչև լուսաբաց:

Ախ, վորքան պարզ եմ յես հիշում հիմա
Բալախանու սեւ փողոցը նավթոտ,
Ու կյանքս ե անցել անգույն ու հիմար.
Սիշտ շուրջս թանձր մուր ու խոնավ տոթ:

Ինչպես կինոյի լուսացող եկրան
Առաջս ե կանգնում մութ առորչան այն.
Անա մուրճով քո՝ անքուն, անդադար
Հարվածում ես կուռ յերկաթը շիկնած:

Շուրջդ յեռանդ կա, անաղմուկ ընթացք,
Ինչպես ովկյալի անդորր մակընթաց,
Աշխատանքն այստեղ տանջանք ե ճնշող,
Իսկ դու շղթայված, աղքատ ու անշող:

Քեզ հետ տքնում ե մի ամբողջ բանակ՝
Սրտում զալբուլթ ու ցասում կուտակած.
Ո՛ր, ընդերքներում նրա անհատակ
Կոփվում եր հսկա լուսե ապագան:

Յեւ մի առավոտ ել դենքը ձեռքիդ
Դու վերադարձար գործարանից քո:

Ո՛ր, յերգիչ վորդիդ վճնց հիմա յերգի
Որեքն աջն արնոտ մահի ու վերքի:

Դու ինձ հայրաբար համբուրեցիր ջերմ,
Ապա գրկեցիր յեղբորս սիրով:
Քո ջինջ, ցորնագուշն դեմքին իջել եր
Վճռականութուն ու ըմբոստ կորով:

— Դե, կնիկ, ասիր, — գնում եմ կռիվ, —
Ասացիր հանգիստ մարտիկս տկար,
Ավերենք պիտի, դարձնենք ցրիվ
Տերերի գանձը, վորը դարեդար
Մեր կյանքն ե լափել, աշխատանքն արդար:

Ու դուրս գնացիր տնից շնորհակի,
Մեզ վորք թողնելով քաղաքում ոտար:
Յես չհասկացա խոսքերդ արդար,
Յեզ իմ մանկական ւրտով վշտակիր
Արցունք թափեցի քեզ համար յերկար:

Ի՞նչ իմանայի, վոր բանվորական
Քո յերակներում վրեժ ե հոսում:
Արյան փոխարեն ե արեականչ
Պատգամներ կան քո սրտում սիրասուն:

Մենք քեզնից հետո մնացինք անհաց,
Դաճնութուն դարձավ մեր կյանքն ամբողջ:
Յես փողոց յեւա աչքերով իմ թաց,
Ուր տեսա քաղցած մի հսկա ամբոխ՝
Շրջում ե հուժկու, սրտում թույն ու վոխ:

Միացա այդ վեհ թափորին անձայր
Ու առաջացա յեղբայրներիս հետ,
Մտանք կրկեսներ, փողոցներ անցանք,
Իսկ շուրջը գնդակ, և ծովի վեճ-վետ
Ալիքների մեջ սուզվող անթիվ կյանք:

Բայլքով անհաստատ շրջում ելի յես՝
Գանդս առլցուն, անորոշը մառ,

Յես դարձել եյի անտարբեր ու հեղ
Դեպի շուրջն իմ, ուր արլունն վառ
Ներկել եր փողոց, մայթեր ու կրկես:

Անտարբեր եյի, ինչպես հիմար յեղ,
Կարող եր արդյո՞ք միտքս մանկական
Հասկան յլ մի պահ, վոր հանուն մեր վես,
Կարսի գալիքի տալիս են բյուռ կյանք
Իմ դասակարգի կորյունները վեհ:

Անցան սրընթաց ամիսներ յերկար,
Յեզ մի առավոտ դու վերադարձար,
Վերքեր կային քո ձեռքերի վրա,
Այ քունքիդ՝ յերկու սպի վարդագուշն,
Ինչպես ակոսներ, առվակներ մաքուր:

Դեմքիդ ծիծաղ կար և լույս անսպառ,
Իսկ գլխիդ ծածկած գորշ կոմուն սրկա, —
Դու ինձ գրկեցիր կրկին խանդավառ
Յեզ հիացմունքով ասացիր. — հիմա
Չկան ել տերեր, հին ցեղեր ու ցար...

Յեզ դու պատմեցիր գիշերներ յերկար
Դյուցազնավեպը ձեր հերոսական,
Թե ինչպես անցաք արյունով ներկած
Գյուղեր, քաղաքներ՝ ավեր, կիսաքանդ,
Փողուն հանձնելով ինչ հին ե ու բանտ:

Յեզ նոր տարիներ յեկան մեծագոր,
Ավերման, կերտման մի հսկա երա,
Յերկիրը նախկին՝ լույսի յերազով՝
Այլափոխից իր դեմքը հնորչա,
Նետելով կապույտ բորբոսը անթով:

Յերջանիկ ելիր զգում քեզ անչափ
Մեր նոր պայքարի ընթացքում ցնցող:
Մեր բանակի հետ առույգ, համընթաց
Դու քայլում եյիր, գործում անհողող,
Գրոլետարական ձեռքերով անդող:

Յեվ ցուրտ շիրիմ ենք դնում քեզ այժմ,
Յերբ քո դագաղի շուրջը հարաշարժ
Մեր կյանքի հսկա շագեշարժը վարժ
Առաջ և սւրում յուր արանչյուր ժամ
Յնցող փոթորկի նման հողմավար:

Զորանոց դարձա տնից հեռավոր՝
Մութիս մեջ սահած անանուն թախիծ:
Ինձ վողջուհեցին սեր վաշտի բոլոր
Ընկերներն իմ, վորոնց պեմքին խինդ
Ու նույն ժպիտը տեսա լուսավոր:

Իմ ձեռքը սեղմեց, ինչպես հարազատ
Իմ լավ բարեկամ վաչեն սնայակեր:
Նա ուղիղ նայեց աչքերիս անթարթ,
Ուր վիշտն իմ թագուն առատ թափել եր
Մշուշի շերտեր, թափանցիկ ամպեր:

Թախիծը ցնդեց իմ սրտից անդարձ,
Ինչպես ձմռան մառախուղը ցուրտ,
Յեվ կյանքս դարձավ նորից անհատնում
Առորյա շքեղ խնդուկյուն անթույն,
Վորով գնում են զրոհներ անդուլ:

... Ձեզ հետ եմ դարձյալ, ընկերներ իմ բյուր,
Թեպետ ինձ ցնցեց հողմը չարագուժ,
Մեր զրոշի տակ—կարմիր ու պուրպուր
Կրկին քայլում եմ, և սիրտս թառն
Եւ չի տագնապում՝ ցավերից անքուն:

Հաստատ եմ այժմ տոկունությամբ նոր,
Ո՛ր, չի՞ ցնցի ինձ եւ վոչ մի թախիծ,
Ապրում եմ հիմա մեր ծիծաղախիտ
Առորյան անհուն ու հզորազոր,
Վորին ձգտել եմ կապույտ յերազուր:

Նույնն են լեռները մեր սրագագաթ
Ու վեր խոցացող յերկիրը մեր լայն,

Նույնն են լուսինը, վոր լուսեղեն կաթ
Ու արծաթներ եւ ընծայում անծայն
Հեռու լեռներին, դաշտերին անծայր...

Նույնն ե իմ սրտի խինդը անպարիակ
Յեվ րանակային առորյա պայառ,
Իմ լերակներում դարձյալ հրավառ
Հոսում ե խաղով, աշխուժով անտակ
Քո վոգեշնչող արյունը կայտառ:

Հանձնել եմ կյանքս, նվիրել լրիվ
Դրոշին այն մեծ, վորի համար դու,
Նման անհողողդ անձնուրաց մարդու,
Մղում եյիր մարտ—կռիվ հաղթական,
Վորպես վեհ զինվոր պրոլետարական...

1934

ԺՊԻՏ

Ինչպես շքեղ վոսիկներանգ ճառագայթ,
Յես տեսնում եմ քո ժպիտը, ղեկավար,
Մեր լեռների կատարներին մեծագան
Յեմ անսահման մեր ցանքսերում նորավարտ:

Մանուկների շրթունքներից լուսակաթ
Յես լսում եմ ուրախության անթիվ կանչ,
Նրանց դեմքին շողշողում ե ճառագած
Քո ժպիտը հրապույրով դյուլթական:

Լեռնաշխարհի գյուղականները մեր չքնաղ
Վողբովել են քո ժպիտով իմաստուն,
Վողբովել ե կյանքը մեր յերգ ու քնար՝
Քո խնդրությամբ, ով առաջնորդ լուսատու:

Վոնց ծիածան հրապուրիչ ու շքեղ՝
Քո ժպիտն ե շրջում հիմա ամենուր,
Մեր գյուղերում, քաղաքներում նորակերտ,
Տարածելով յերջանկություն, հրապույր:

Ո՛, տեսնում եմ քո ժպիտը հրագույն
Հաստատաքալ շարքերում մեր պատանի,
Մեր սրտերում ե հույզերի մեջ մաքուր,
Վոնց անսովոր ուժ ու ավյուն վիթխարի:

Ներշնչում ե քո ժպիտը մեզ յեռանդ,
Դու նոր կյանքի ճարտարապետ հաղթարի,
Յեմ տալիս ե մեզ բախտավոր յերգ ու կյանք՝
Արեգակը քո լուսագան հանճարի:

1936

Յ Ա Ն Կ

Եջ

1. Մոկվա	5
2. Յերգ Մառինի մասին	6
3. Խիզախություն	8
4. Խորհրդային Հայաստան	9
5. Հայրենիք	11
6. Մոնետ	13
7. Յերախոսազխտություն	14
8. Առաջին պնդի մարտիկներին	16
9. Մեր գնդի յերգը	17
10. Դիչերային յերգ	18
11. Իմ հալացում	19
12. Գաղաթնուր	20
13. Իմ կրակը	22
14. Մենք պարտաւ ենք	23
15. Պատի վրա	24
16. Ողջուի յերգը	26
17. Հրաժեշտ ճամբարին	27
18. Ձանձնալին	28
19. * *	29
20. Ձնհալն ընկավ արդեն	30
21. Մայիս	31
22. Ուղի	32
23. Ջահելություն	33
24. Հովհաննիս Թումանյանին	34
25. Նիդերլանդ	36
26. Ժպիտ	42

Պատ. խմբագիր՝ Սիրառ
Տեխ. խմբագիր՝ Ս. Ալեքսանյան
Սրբագրիչ. Վ. Ավագյան
Կենտրոն սրբագրիչ՝ Գ. Հակոբյան

Գլավիտի լիազոր Կ—4701. Հրատ. 4281

Պատվեր 114+. Տիրած 2000

Թուղթ 62×94 Տպագր. 23 $\frac{3}{4}$ մամուլ

Սեկ մամ. 39400 նրշ. Հեղինակային 2 $\frac{1}{2}$ մամ.

Հանձնված և արտադրության հուլիսի 5-ին 1937 թ.

Ստորագրված և տպագրության հունվարի 11-ին 1938 թ.

Գինը 1 ռ. 50 կ.

Պետհրատի տպարան, Յեքեան, Լենինի փող. 65

ՀՀ Ազգային գրադարան



NL0358788

